

ԵՂԵԳՄՆ ՓՈՂ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻ ԴԱՐԲԵՐԱԹԵՐՈՂ

11-12 (109-110) նոյեմբեր-դեկտեմբեր, 2015

ՀԵՌԱԿԱ ՄԻ ԿՅԱՆՔ ԵՐԿՐԱՇԱՐԺ

դեկտեմբերի-
տաքն ու ցուրտը
սքալի է

անձրևի մի
հատիկ
հատ-հատ
հետո

ճակատիդ՝ ճտտացնող

վիրավորներին՝
բեռնատար ավտոներից
ոտքով-քայլով
շտապագնության
մեքենաներից
չալակում-ընդունարան են
վազում

կանավոր ուսանողները՝
սպիտակ խալաթներով

Լենինականից մինչև
Երևան-
Նորք-Մարաշի
հիվանդանոց մինչև
նուրբերի տակ-
սարսուռ են ցնցումները
հողի

փոշու
ու արյան-արյան ու փոշու
շորերից ցեխ դառնող
փոշու ու արյան
հոտ է

(Երդանան-կանցնի)

ուշաքափ վիրավորներ
ուշքը գնացող-
նրանց՝ շալակած
ուսանողներ

մի կին ամուր կախվել է
քո շահել
ուսերից-
բաց չի թողնում՝
բժիշկ, ասա, որ ուս
չես կտրի-
ես նրան սիրում եմ-
չասես-բաց չեմ թողնի...

ասում-չես ասում
չես ասում-ասում ես

միայն՝ ոտքերիդ տակի
հողը

չփախչի-հիմա չփախչի

չփախչի-չփախչի-
չփախչի


ինչ դաժան ամիս է
այս դեկտեմբերը-
սքալի
չէրդացող
մի կյանք-

ամեն
դեկտեմբերի

ՍԱԿԿ-ՎԿԿ ԳՐՈՂԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀՆ ԹԱՄԱՐՅԱՆ

ԳՈՅՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԻՆ ՄԵՐՉ



(հատված էստից)

Ուզում եմ ավարտել իմ այս՝ ապրողիս ողբասացույթը, բայց ընկերներիս ճանաչում ունեմ. հեշտ կորցրի նրանց: Այսպիսով է՛լ՝ կորուստն առավել դաժան է: Մեկտեղ ինչ-պի՛ս էինք ապրում: Դժվար: Ծանր կյանք էր: Սպանության կամ ինքնասպանության չափ ծանր կյանք, որ մեկտեղ ապրեցինք: Մենք, սակայն, կյանք չապրեցինք: Դաժան էր: Եվ գեղեցիկ էր, քանզի ուզում էինք գեղեցկացնել:

Թորմում էինք գեղեցիկ տեսնել, բեև արդեն զգում էինք մեր խաբված լինելը: Մեր գրած մտաբանությունը տողը կյանքի մասին էր: Մեր կարողի մասին էինք պատմում: Այդպես էլ օրը ցերեկով պայքարի ելանք: Արատի հետ մինչ ի լույս քայլեցինք Երևան քաղաքի փողոցներով ու ճյացիներ:

-Հայեր, արքանացեք, հայեր, միացեք:

Տանյա Գրիգորյանը և Լենինականում շարժման գլուխ կանգնած էր հայկում: Հայկանի Տոնոյանը Ազատության հրապարակում երկրորդից արձանանում էր:

-Աստված, շնորհակալ եմ, որ զարթոնքի տեսությանն արժանացրիր:

Նրանց ամեն մի տողը ազգային գիտակցություն էր: Նրանց ինքնահաստատման ուղին Գողգոթա էր: Տանյան զագաթին էր մոտենում: Տանյայի մտերիմ բանաստեղծուհի Վիլետ Գիրգորյանը շատ հետո գրեց. «...Եթե Լենինականում ընդամենը մի շենք փլվեր, համոզված եմ, Տանյան այդ շենքում էր լինելու... Սարսափելի զգացողություն է:

Վազքարշավ կամ ակաժան երթ կար դեպի Երևան՝ խմբագրություններ, հրատարակություններ: Գրատարակական հրաշալի՝ նախահեղափոխական անցյալ ունեցող Գյումրին այսօր էլ Երևանի զարմազան դեմերն է բակում՝ գիրք տակելու հնարավորություն մուրալով: Համարյա չեն տակիս: Թուրք չկա՝ շրջափա-

կում է: Թուրք եկավ՝ ամսագիր հրատարակելու իրավունքը ձերն է...

Աղետի առաջին ամիսներին բանաստեղծ Գրայա Բեյբերյանի հետ պատրաստվում էինք զնալ ու հրատարակել այդ ամսագիրը, բայց... Երբ ես առաջին անգամ գիրք հանձնեցի տպագրության, և Վանո Սիրադեղյանը շատ դրական կարծիք գրեց, ուրախացած Աշոտ Ավրայանը, որ առողջությունը քայքայել էր բուն կյանքին ու գրականությանն ընդդեմ բաց թողնված սոցիալիզմի վազքուղիներում, ձեռքն ուսիս իջեցրեց:

-Կոնիանա՛ս: Ինքն ու Ավետիք Դարբինյանը չդիմացան:

Լավ՝ ես ավարտում եմ, բեև ամեն ինչ չէ, որ կարողացա մինչև վերջ տան: Լրացում ամեն եթե Սարգսյանն ասում է՝ ինչ, որ տեղ ինչ-որ բան սխալ է, ես հավատում եմ: Զգիտեմ կորուցնե՞ք, եթե հանձնարել մի բան էլ ինքս ասեմ. մեզանում սարքված և սարքվող ամեն ինչը սխալ է արմատից չուրի աղաբար: Օրինակ, երբևիցե համեմատվի՞լ է Լենինականի գրատարակությունը Ալեքսանդրապոլի գրատարակությանը հետ, մնա՞վանդ որ ճանաչողականներ տանելու համար մեր խելքը մեր չէ: Մանավանդ՝ մեր զանազան դեկավորների ու պաշտոնյաների խելքը: Թողեք ես էլ համեմատեմ (դեկավոր կամ պաշտոնյա չլինելուս համար երդողություն): Ալեքսանդրապոլը ուներ վեց տպարան: Տպագրվում էր երեսուներկու ամսում թեթև ու հանդես: Քսանական թվականներին և ավելի վաղ այնտեղ գրքեր են հրատարակել Իսահակյանը, Չարենցը, ուրիշներ: Իսկ ի՞նչ կա մերկայիս Լենինականում: Քաղաքում անվանափոխվեց՝ եղավ ամրո, իսկ ամրոնում բացարձակապես ոչինչ չմնաց: Եկեք պայմանավորվեք, զուգահեռներ տանելիս չեմ խոսելու արեւի փլվածակազրկության: Իմ զուգահեռների ժամանակագրությունից դուրս է արժեքը: Ուրեմն 1988թ. դեկտեմբերի 7-ի ժամը

11 անց 41 րոպեին (երկրաշարժից վայրկյաններ անց) քաղաքն ուներ խելքը զլխին մի տպարան (արտասահմանի համար՝ բանգարանային բացառիկ գտածո) և լրջության հավակնորդ մի քեթր՝ «Բանվորը»: Հա, նաև դպրոցական պատի թերթերից մակարդակից շատ ցածր, բազմատպագրանակ ծաղրանքներ: Սակայն, վերլուծելով մեր ապրած կյանքը, մենք ստիպված ենք խոստովանել:

-Բա որ այդքան էլ արտոնվեր:

Այսինքն՝ նվաճումներն ակնհայտ են ու անուրանալի: Մենք, եթե իսկապես լույսի մեջ ենք կանգնում տեսնել գոհերին կամ նրանց հիշատակը, ուրեմն պարտավոր ենք հոգալ նորերի և Մնացորդացի հոգները: Մտածեք Լենինականում, նաև Կիրովականում գեղարվեստական ամսագրեր տպագրելու մասին, թե չէ՛ ամեն անգամ նույն ողբերգական ասածն ինչելով՝ մեռանք:

-Գնա մեղի, արի սիրել: Քանի կուպեկ արեւ հետմահու սերը խաչված սարկուց հետո:

Լենինականում իմնա էլ պայքարում եմ գրական որևէ հանդես ունենալու համար: Եվ այդպես, լցված այդ անհույս (ինձ կանխե՞ք՝ իրականացող հույսով) պայքարի սայլին, շատերը եկան ու անցան: Գալիս ու անցնում են՝ սոցիոլոգիայի հարցախոսակցությունների ատանաճիվների արանքներում նախապես ձգելով յուրյանց հոգիները: դեռուղներ կործանվեցին: կործանվում են:

Ավանտան ու վկան ես եմ: Իմ ընկեր Արարատ Մկրտումյանը ՔՎԴԻ՝ Երկա տպարանում գրքեր հրատարակելու երազներ ուներ: Մեր գրքերն էլ էր տպելու: Իր գրքերն էլ էր տպելու:

...Փայտակների մեջ մնացին որոշումները, խոստումները: Մանավանդ՝ նվաճումները: Փրկվեցին լույս Ազատության հույսերը:

Մնացինք մենք՝ Մնացորդներ: Մնացինք մեր հույսից մեզ համար անսովոր իրավի-

ճակ: Մնացին անմարդկային աստատով զարկաբարձությունը շարվածքները և տպարանի կնիքները՝ ցցված այուներ: կախալանի ցցերի պես:

Ո՛րն է մեր գոյության երաշխիքը: Կարծեմ մեր մեծ ու քնարած եղբայրները չեն: Աստված էլ մի տեսակ ոնց որ փորձագետ լինի, բոլորիս հավաքել այս քարե փորձանքում և փորձել է անում արեւիտների հեղինակած բարբարոս աշակերտությանը: Լավ էլի, Տե՛ր իմ: Լավ էլի:

... Այսօր, 1989թ. նոյեմբերի 15-6 է, չորեքշաբթի: Դառնելով ժամը 4 անց երեսուներեմ և զարթոնելով 9-ին՝ հիշեցի, որ վերջակետ եմ դրել: Եվ ստորանում զգացողություն կարծես ինձ հենց նոր հանեցին պանելի տակից: Ողջ եմ: Մի քիչ գլուխս է ցավում: Մի քիչ կուրծքս է ցավում: Մի քիչ մեռելուս են ցավում: Մի քիչ ոտքերս են ցավում... Եվ ցավերս հաշվելով՝ անդրադարձա, որ երեկ դարձյալ հետնազգվեց Արարատի հարցը: Ուզում է Մի քիչ թերեք: Իսկ հետո կեղծ բարեփոխումների մի որոշում էլ կիրառարկան է սինկրոնները: Եվ տրամաբանության անտեսանելի շրջան ինձ ետ տարավ 111 տարով: Խրիմյան Հայրիկը Բեռլինի խառնաժողովից տուն դարձավ ու հուսահատ ասաց.

-Նրանցք երկաթե շերտի էր, մերը՝ օրթե:

Որդործի քեզ, իմաստուն Հայրիկ, աշխարհը նույնն է, կարթան նույնն է, շերտի՞ր՝ նույնը: Մեր նույն Թորե Շերտիկը: Եվ տարբեր փայլուն (Բարձր) Դոների նույն արտացոլից չորանում են Տապաճի Շաղիկ Հայաստանիս Այգեստանմե՛րը...

... Հե՛յ, հայրիկ, ողբացի՞ր: Ուրեմն, ել: Սրբի արցունքները: Թափ տուր ձնեկների փոշին: Ուղիղի մեջքը: Եվ միգ տուր՝ Ձագակաթնի Շաղիկ Հայաստանիս Այգեստանմե՛րը...

Երևան 1989թ.

ՍՈՒՆ ՎԱՆ

ՏԻԵՉԵՐՔԸ ՔՈՒ ՄԵՉ

Ուփքները տեսնում է տիեզերքը խոտի տերևներում Բլեյքը... ավազի հատիկի մեջ Գինգերբը... աչքերում սովորական մարդու ու էրոսի ես... որպես կին տեսնում եմ բոլորն այս պատուհանից հիմա և վազք եմ փռում կիսաժպիտ մասիվան դեմքը անվերջ մեծանում է կյանքիս ծիրաղելի հայելու մեջ կշռում եմ քաղաքն այս փակ կապերով քար է... օդ է... ու ժամանակ իսկ դու ամենուր ես... խեղճուկ... օդի նման խոտի տերևներում ավազի մեջ աստղերի մեջ ես դու և աչքերում տղաների այն սովորական

«Ձգո՛ւյ՜... զգո՛ւյ՜ քայլիդ անապատով սա սովորական ավազ չէ սա... ավազն ճերմակ վիրակապ է դրված միլիոն ու կես երազների վրա ուզում ես իմանալ գոհների ճշգրիտ թիվը. դժվար չէ... մաղիդ անապատի ավազը ցանցի վրա ինչպես ձկնորս հաշվիդ ահաբեկված աչքերի թիվը ու բաժանիր երկուսի»:

խաղալու նման բան է ապրելը

Աստված, երբ որ գա զնայու ժամը ինձ մորս ծայրով կկանչես միայն

ինձ մորս ծայրն է համոզում միայն, որ ժամանակն է բարձրանալ վերև/, բայց մի շտապիր բող որ մի քիչ էլ խաղան ներքևում

ապրելու նման բան է խաղալը. գիտես չէ՞

ՍԱՅՐԱ

... ես այս օրերիս Աստծուն կրում եմ վերնաշապկիս տակ տաք հացի նման ուս բաժանում եմ ուս որ պատահի մեր խոհանոցում մեծ փայտյա տաշտը միշտ նույն չափով էր լցված խմորով մայրս կարծես թե իր մատներից էր հանում խմորը կամ ավելի շուտ խմորը կարծես մորս մատների մետամորֆոզն էր փայտյա տաշտի մեջ մայրս... Երբեմն փորձում էր սրբել քրտիկները դեմքի և տասը հավասար խմորի շիթեր մորս մատներից ձգվում էին մինչև ցրա ճակատը հայրս ասում էր որ խմորից է մայրս մեզ սարքել ու ծիծաղում էր մայրս լուռ էր ու շարունակում կանգնես միայն խմորն ճերմակ

իրեշտակներ կախել մատների ծայրից մայրս... Երգվում եմ կարող էր քայլել ջրերի վրա թե կարողանար ձեռքերը մի կերպ պոկել խմորից...

Արարչին այլուր որոնողներին ես կարեկցանքով սովորեցնում եմ մորս տան տեղը որպես բանգարան ուր պահպանվում է Աստծո մի մաղը երբ որ բոլորը կլոր աչքերով նայում են ցրան անպարտի պես մայրս մի ձեռքով իր թևի մեջ է առնում ոչինչը ու մյուսով հանում փրփուր կալվաջը հանապազօրյա թաշկինակի պես իսկ հետո երբ դեռ անհավատորեն մենք շոշափում ենք հացը օդի պես ես անապատի շրջվում է կողքի ու նայում ներքև Աստծո կեփի պես ես հիմա Աստծո մնացած կեսն եմ որոնում միայն

Պապա... քահանա էր

Նա Աստծուն հավատում էր առավոտյան ժամը ինձից մինչև երեկոյան ժամը վեցը

Իսկ վեցից հետո հանգստանում էր

հայրս... Ֆիզիկոս էր

Նա ինձից վեցը հերքում էր Աստծուն իսկ վեցից հետո գաղտնի հավատում

հորաքույրս բոլոր սիրային նամակները իր պահում էր մաշված Ավետարանում հայտնությունների հերթականությամբ Նա ընթերցում էր Աստծո խոսքը եւ նամակները դեմքի միևնույն արտահայտությամբ եւ երկուսին էլ Նա հավատում էր միայն... կստով չափ

հենվելով նրա ստեղծվածային ժպիտի վրա (բանալու անցքից) դժվար էր ասել թե հորաքույրս ու՞մ էր նախընտրում

փրկության համար... այդ օրը

մայրս (քիչ էր մնացել որ մոռանայի) ժամանակ չունեի հավատալու կամ չհավատալու Նա միշտ զբաղված էր ոչնչից ինչ-որ բան արարելով մայրս միշտ լուռ էր ես...

ժառանգել եմ պապիս ցերեկահավատությունը հորս իրիկահավատությունը հորաքույրս ժպիտը եւ մորս ձեռքերը

Ֆիզիկոս հայրս լուրջ հավատում էր Քրիստոսի փարպիտում ծնված լինելու պատմությանը

հայրս ասում էր որ սովորաբար ճիշտ են դուրս գալիս անհեթեթ թվացող պատմությունները քանզի ոչ մեկը (հայրս ասում էր) իրեն թույլ չէր տա

այն հորինելու կարեկցանքով էր հայրս միշտ խոսում Դովետի մասին Ֆիզիկոս հայրս հրաշքների էր հավատում ճաես

մայրս հրա՛շք էր



Վարդ Թումանյան

ՉՈՒՆ ԽՆՉՈՐԻՆ ՈՐ ՈՒՏՈՒՄ ԵՄ

Կատարելության ձգտումը խանրավառում է ինձ կեցցես եղբայրս հոտող հանճարեղ է իսկ համը ը՛ մ՛մ. որպիստային ոգևորում է գոյնը նաև գիճու և ոսկու ծնունդ և դու բնավ չես մեռնում խնձորս դու բնավ չես մեռնում եղբայրս

*** Անճուր և գայիս... Դիճո սերն արևածաղիկ,

օրինված Կմերձեման շուտով մայր մեղունների: Նրանք կբզզան Վալենթերում կենաց և մահու. Մի տղա է ապրում, Նրա արևածաղիկներով գորսացանք մենք: Մի տղա է ապրում, բայց ափսոս, Նրա մարմինն է առանց մեղրի և կնճը...

ժամացույցի վայրկենապաշին Փակցված է մի դեղին թիթեռ

Թիկ-թակ

Վայրկյան-վայրկյան նա ծանձրանում է

Թիկ-թակ

Օրերից մի օր Տղաս կզոնի ժամացույց Կպոկի թիթեռին Կկանգնի արեգոյն Կպպոստ երկնից ներքո Եվ աջը կպարզի

Թիթեռը կհավիտի

Թիկ-թակ

Թիկ-թակ

Անճուրից հետո Մեղուններ նորից կբաթախվեն Արևի այդ մեհյաններում: Բռոներից լավագույնները այդտեղ

ՊԵՏՔ Է ՋՈՒՄՊ ԼԻՆԵԼ

Մայրս նոր տարվա սեղանի համար 500 գրամ չամիչ է գնել: Ինձ զգուշացրեց զուսպ լինել: Ամեն անգամ, Երբ աչքս ընկնում է Սկուտեղում չորացվող չամիչին՝ Երկու-երեք հատիկ թոցնում եմ: Ինքս էլ հասկանում եմ՝ պետք է զուսպ լինել:

ԱՂՈԹՔ

ՀԱՆՈՒՆ ԲԱՆԱՍԵՆԴՈՒԻՅԱՆ

Ապագայում ևս Թող չտրտնեցամ, Որ սևը սև է:

Վարդի բույր կա քաղաքում. Չվարթուներ գուցե իջնեն ժամանցից:

Օրը է հոսում՝ իրաչեն մի գետակ. Տոբ ջրերում մեր մարմինները երգեցիկ կլողան:

Թիթեռներն են հայտնվել, քնքնում են քնեան, Օժիճեմակներն առույգ ղողանջում են անընդհատ:

Վերցնել շիկափոկները ցանկություն եվ ջրտեսափայլ մարմինները

հավածել:

Պաղարեցին անճուրները...

Ամառը՝ դիպիկ նետածիգ, Թիթախին է խփում:

Տոբ է, տապ է. Մեր մարմիններն ի՛նչ առողջ են քրտնում:

Վարդն է բացվել, Քաղաքը բուրում է զվարթ. Այս պահին միայն Արևահամ կանանց սիրել:

Պահն է արդեն վեր ձգվելու, Թախիճը կար... և ընկրկեց: Չքնա դ երկվեց թռչուններով: Բիթերիս մեջ դու տարածվիր: Ես թիթեռներ նախշեմ պիտի եվ մեղուններ արձակեմ ժիր, Եվ որպեսզի հարթեմ մի լավ, Քեզ կխնձեմ, արև-եղբայր: Թախիճը կար, սես, հեռացավ, Պահն է արդեն վետվետալ ու, Ես ի՞նչ հոգին դուրս կթողնեմ Արևոտներում արածելու: Ես ի՞նչ հոգին դուրս կհանեմ, Մտրուկ է նա, պիտի վարզի, Եվ մարմինս՝ ցորենի հասկ, Դատիկներս ցրվեմ պիտի: Թախիճը կար՝ նա ետ կգա, Պահն է հիմա օրորվելու, Երբ որ նորից ներսուզվի նա՝ Օտղկափոռին էլ չի բիրի:



Գյուրու Վարպետաց փողոցում, որտեղ գտնվում են Գրականության ժյուրիի, Ավետիսյանի, Միտի Մկրտչյանի տուն-թանգարանները, դեկտեմբերի 7-ին բացվեց համաշխարհային ճանաչում ունեցող բարձր մակարդակի, գրող ու հրապարակախոս Ասմվել Մկրտչյանի հուշատախտակը: Տաղանդավոր բարձրմանից հայրակալն տունը Վարպետաց 142 հասցեում է: Ասմվել Մկրտչյանը բարձրման է արտասահմանյան գրականության լավագույն նմուշներ՝ «Թմայն էլիոսի «Մեռյալ երկիր»-ը, «Շեքսպիրի տոնտոնները, Ջեյմս Զոյայի «Վլիխեն»-ը և բազմաթիվ այլ հեղինակների ստեղծագործություններ:

Հանկարծաստեղծում Բեյցզինում (հատվածներ)

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև անգլերեն բառի ոգեշնչումը լատինական Spiritus-ն է՝ շունչը, ես ուզում եմ ազատ շնչել:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև Ուոլթ Ուիթմենը աշխարհին թույլ տվեց անկեղծորեն խոսել:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև Ուոլթ Ուիթմենը բացեց պոեզիայի բանատողը համուն անարգել շնչի:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև Էդրա Փաուսը, թեպետ փղոսկրյա աշտարակում էր ապրում և գրավ բռնում սխալ

ծիու վրա, թույլ տվեց բոլոր բանաստեղծներին խոսել մայրենի բարբառով:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև Էդրա Փաուսը պատվիրեց Արենուտցի ջահել բանաստեղծներին նայել շինական թերթվածներին ու նկարներին:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև Ռուդերֆորդում ապրող Վիլյամ Կարլոս Վիլյամսը գրեց Նյու Ջորջիի լեզվով «Տամ աչքը հանեն» կնարգրեց ո՞նց եք չափում սա հնգոտյա յամբով:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև հայրս բանաստեղծ էր մայրս կոմունիստ էր Ռուսաստանից ու մեռավ գծաճղում:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև ռուս բանաստեղծներ Մայակովսկին ու Եսենինը անճանաչան եղան, ուրեմն մեկ ուրիշը պետք է խոսի:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև հայրս արտասանում էր անգլիացի Շելլիի ու ամերիկացի Վեյլը Լինդայի բանաստեղծությունները և օրինակներում - անս մի ոգեշնչում քամու մնալ հզոր:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև սեքսի մասին գրվածքները գրաքննվում էին Միացյալ Նահանգներում:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև միլիոնատերերն արեւելքից արեւմուտք Ուոլ

Ռոյս են ջջում, իսկ աղքատները փող չունեն ատամները բուժելու համար:

Ես բանաստեղծություն եմ գրում, որը միշտ ասում է. «Առաջին միտքը լավագույն միտքն է»:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև բոլոր գաղափարներն անմատչելի են բացառությամբ երբ արտահայտված են իրական առարկաներում, անվասիկ Վիլյամ Կարլոս Վիլյամսի կարգախոսը. «Իրերից դուրս չկա գաղափար»:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև տիբեթական Լամա Գուրուն ասում է. «Իրերն իրենց իրենց խորհրդանշանն են»:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև լրագրերի առաջնորդները սկանցեց են մեր համակարգության կենտրոնում, մենք ազատ ենք այդ ամենը նկատելու համար:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև եղավ Առաջին աշխարհամարտը, Երկրորդ աշխարհամարտը, միջուկային ռուբը, և կլինի Երրորդ աշխարհամարտը եթե ցանկանանք, բայց ես չեմ ուզում:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև իմ առաջին պոեմը «Քեդիջը», փառաբանում էր գծաճղում մահացած մորս:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև ըստ Մոսկվայի

Ստալինը 20 միլիոն հրեա կոտորված արեւելյան Սիբիր, որոնցից 15 միլիոնը այդպես էլ չվերադարձան Սանկտ-Պետերբուրգի «Անտեր շուն» քրեաբանը:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև երգում եմ երբ մեռնակ եմ գրում:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև Ուոլթ Ուիթմենն ասել է. «Ես հակառակ եմ ինձ: Դրաշայի է ես հակառակ եմ ինձ: Ես ընդարձակ եմ, ես բազմություններ եմ պարունակում»:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև միտքը հակասում է ինքն իրեն, այս պահին Նյու Յորքում է, հաջորդին՝ դիմարական Ալպերում:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև չկա պատճառ չկա որովհետև:

Ես բանաստեղծություն եմ գրում, որովհետև սա լավագույն միջոցն է արտահայտելու մտքում եղած 6 թույլում կամ ամբողջ կյանքում:

Անգլերենից թարգմանց ԱՍՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆԸ



Մարտին Մուրադյան

Ծնվել է Լեւինակամու: Մասնագիտությամբ շինարար-ինժեներ է:

Գեղեցիկ արարումը՝ բանաստեղծության, կիրառի ակորդների, խաչքարերի ու փայտյա հրաշալի զարդանախշերի արվեստով, ուղեկցում է նրան:

2006թ. լույս տեսավ նրա «Սեփնական երգեր» բանաստեղծությունների ժողովածուն: Ներկայացնում ենք բանաստեղծությունների մի փունջ նրա բարձրամտությամբ:

ԻՌՍԻՖ ԲՐՈՂԱՎԻ

Թիթեռ

I
Ասել, որ մեռած ես դու, երբ ապրեցիր մեկ օր: Որքան շատ բախտով կա Այս կատակում Աստծո՛ւ, Դժվարությամբ եմ ասում Ապրեցիր: Զո՛ւն ծնողյան օրվա եվ այն պահի, երբ իմ արևուն փշրվեցիր. Միասնությունն է դա:

Եվ հիմա շվարած Չեմ էլ կարողանում Այդ երկուսից մեկի Բանակը գեթ հաշվել Մեկ օրվա սահմանում:

II
Զանդի որ օրերը մեզ հաճար Ոչինչ են, Եվ ընդամենն այսքան, Դու նրանց Չես ծակի ու փակցնի Որպես սովորական մի բան: Եվ մերձակի վրա նրանք Չեն երևա, Զանգի շունեն մարմին երկնատու: Օրերը, ինչպես դու, Ավելի սուույգ մի բան, Թեթև է տասն անգամ Մեկից այդ օրերի:

III
Ասել, որ դու չկաս Ընդհանրապես ս, Բայց ի՞նչ է այլապես Ի՞մ ափի մեջ հիմա, Թեզ այդքան շատ նման: Գուցե մարմինը չէ Անեության: Ո՛րն հաշվելով, ինչպե՛ս են Գույները դարավում: Ի՞նճ բաների բնչուկ

Թորովացող մեկին, Որ օտար է գույնին, Երբեք էլ չի տրվում Դատելությանը Գույնի տեսականին:

IV
Գեղեցկուհի հավիթ Առած թիթ ու բարթիչ Թևիկներիդ վրա: Ասա՛, ո՛ւմ դեմքերի Փշուրներն են դարձած Թռչող դիմակվար: Եվ երբ, ասա՛, այդ խուս Փշուրներըդ պայծառ Նատյուրմորտ կդառնան, Իրերով ու բարով: Չկնորսի ավարով Եվ լի, և լայն:

V
Հնարավոր է, որ Բճանկար ես, բե՛մ: Խոշորացույցն առած Նայողների խմբեր, Դատողներ ու լողափ ես կհայտնաբերեմ: Լո՛ւյս է այնտեղ, ցեղե՛կ, Թե՛ գիշեր է, քախտ: Եվ ինչ լուսատու է Երկնակամար եղել: Ասա՛, սարքված է՛նա Ի՛նչ օրինակից:

VI
Մտածում եմ, Որ դու և այս ես, և այն: Եվ թո՛ մեջ կան աստղի, Դեմքի, իրի գծեր: Ո՛վ էր ոսկերիչն այն, Որ աչքը չբարթած Մանրակար դաջեց Աշխարհը այն, Որ հանում է մեզ խելքից, Եզջարի մեջ աղմուկ, Որ դու խոսես դառնում Իրի մասին ու մեք՝ իրն ինքը:

VII
Ասա՛, քեզ ինչո՞ր է Մյուսիսի նախշ տրվել, Երբ կյանքը մեկ օր է: Լճերի երկրում, Որի ամապանը

Տարածքներ է պահում: Եվ չես տախի հեճար Այս կարծ ժամկետում Ցանցում հայտնվելու, Դեռապղծման պահին Դողդողալ ափի մեջ Եվ աչքեր գեղել:

VIII
Չես տա ինձ պատասխան, Ոչ այն պատճառով, Որ չար ես ու կամակոր, Ամաչկուտ, չխոսկան: Ողջի թե՛ մեռածի, Ամեն արարածի Չայն է տրված, լեզու, Ցեղակցության նշան, Որ երկարացնեն, Բուսեն օր դարձնեն, Նույնիսկ պահն անշնչան:

IX
Իսկ դու, դու գրված ես Այդ գրավից: Բայց երբ դատում ենք խիստ՝ Թե՛քա՛: Լավ է այդպես ս: Ինչո՞ւ պարտքեր գրել Երկնի գրքերում: Ինչո՞ւ ես թրքում քեզ, Երբ քաշդ էլ, կյանքդ էլ Սրժան են համրության: Չայնք բեռ է անլուր, Ամուլ, քան ժամանակը, Իսկ դու՛ առավել:

X
Չզգալով, չապրելով Մինչև անգամ ահը Փռուց թեթև ճախրում ես Մարզի վրա, Որ նման է բանտի Անցյալի ու ապագայի Իր հեղձուկով: Այդ պատճառով, Երբ սնունդ տե՛նչալով Թե՛քում ես մարգագետինի, Թե՛զ գրկող օղը Չէ և աճում ներհում:

XI
Որպես համադրում Գեղեցկությունդ և Կյանքը թո՛ կարճատև:

Շրթունքներ են ծնում: Ես էլք հստակ ասենք- Արարում են աշխարհի Նպատակներ չունի, Թե ունի էլ, մեք չենք: Դարք չէ սուր ու բուրբ- Միջատաբան ընկեր, Դեռք չէ ասեղ տնկել Լույսի մեջ ու մութի:

XII
Գրիչն այդ է անում: Սահում է տեսող Դարք գծերով անաղարտ Ու չի էլ իմանում Բախտը գրված տողի: Որ խառնված ու մերձ են Իմաստունն ու հերձը, Կատա ճեղքի տողին, Լեզվին այդ անանուն, Որ գուցե մեր բախտից Ոչ թե փոշին ծաղկից, Ուսից բեռն է հանում:

XIII
Ասել «Զրաժեշտ քեզ» Որպես ձևի՛ն օրվա: Կան այնպիսիք, ում միտքը Մուսայանն տիգն է Խուզում, բայց տես ս, Մեղավորը դրա Այն է, որ հետևում Օրերը չեն կիսվող Անկողնու թույրերի, Եվ ոչ երազը դող, Ոչ որևէ անցյալ- Այլ լով անպերճ են Զո՛ թույրերի:

XIV
Դու ոչնչից լավն ես: Եվ մոտ, և ակնի, Եվ լավ տեսանելի, Սակայն խորքում այլ ես, Դու ցեղից ես Նրա: Զո՛ թույրում թեթև Մարմին առավ՛ Նա, ձև: Այդ է պատճառն ասա, Որ առօրյա կյանքում Արե՛ս քեզ համարել, Որպես թեթև արգելք Նրա ու իմ միջև:



«Արծալ» հրատարակչությունը լույս է ընծայել Սոնյա Խաչատրյան-Ստրալցեկիների «Ամուրյակ K 20-X» արձակ ստեղծագործությունների ժողովածուն: Ընթերցողին ենք ներկայացնում «Ամուրյակ» գեղարվեստական դրվագը:

ԱԿՏՈՎՈՐ

Գլխավոր ճանապարհով Կաունասից Վիլնյուս, որը անցնում էր անտառի կողքով, սկսում էր մի մեքենա մուգ կանաչ «Մերսեդես Բենց», որն այնքան նոր էր, որ ուղղակի շողջողում էր ու աչքի ընկնում սլացող մյուս ավտոմեքենաների մեջ...

Հանկարծ, անտառի կողմից մի եղնիկ է հայտնվում հենց ճանապարհին: «Մերսեդես Բենցի» վարորդը հազիվ է հասցնում կանգնեցնել ավտոմեքենան, նա սկսում էր 160կմ/ժամ արագությամբ... գզում է, որ ավտոմեքենան ցնցվում է ու կանգ առնում...

Վարորդը, որը կլիներ քսանհինգ տարեկան, շագանակագույն, կարծ, ոզնու սանրվածքով, միջնահասակ երիտասարդ, մի ականջին ուներ ոսկուց կլոր օղ, քթին ու ներքին շրթունքին

նույնպես... Վախեցած նայում է շուրջըրդը ու կամացուկ դուրս գալիս ավտոմեքենայից: Նա անհամարձակ զննում է կենդանուն, որը աչքերը փակած փոփած էր ավտոմեքենայի առջեւի անիվների տակ...

«Սյ՝ ցավդ տանեմ, այ՝ խելագար կենդանի, աչքդ ինձ տեսա՛վ... այսքան մեքենաներ են անցնում, ինչո՞ւ իմ մեքենային խվիվեցիր:

Հեռվից մոտենում են ճանապարհին հերթապահող ոստիկանության աշխատողները իրենց ավտոմեքենայի սուր ազդանշանը միացրած:

Երիտասարդն ընկճված սկսում է ռոքերով թույլ հարվածել կենդանուն, գլուխը կողքուած գոչում: «Ուշքի՛ արի, եղբայրս, հիմա ինձ կտուգանեն, գուցե ես իմ փաստաթղթերը կվերցնեն... Նստապում եմ իմ հարսանիքին... Պատկերացնում ես, եթե

ես չհասնեմ զագս... Եղնիկը բացում է աչքերը ու նայում պճնված երիտասարդին: «Օյ, ուշքի եկա՞ր... անայիտա՛ն, ուրախանում է երիտասարդը: Այդ ժամանակ մոտենում են ոստիկանության աշխատողները:

Եղնիկը շորորալով ուռքի է կանգնում, երիտասարդը հավում է նրան ու փաթաթվում կենդանու վզին պահելով նրան, որ վար չընկնի:

«Ի՞նչ է պատահել,- խիստ տոնով հարցնում է ճանապարհին հերթապահող ոստիկաններից մեկը, խեղճ կենդանուն մեքենայի տակ ես ցցե՛լ, չե՛ս ամաչում, ամաչում եմ, տուր փաստաթղթերդ...

Խեղճ կենդանին նայում է բղավող, համազգեստով ողամարդուն, մոտենում է ու իր փորթիկ կտոշներով հարվա-

ծում է նրա փորին: «Սյ՝, այ՝, այ՝, հիմա՛ր կենդանի, հարվածի՛ր քեզ վիրավորողին... ա՛յ, ա՛յ, ա՛յ, դրո՛ւմ գլուխ, հեռո՛ւ քաշվիր ինձանից...

Բայց եղնիկը չի լսում, ընկնում է նրա հետեւից: Առիթից օգտվելով երիտասարդը նստում է իր ավտոմեքենան ու սկսում անոթ շարունակելով իր ճանապարհը:

Հերթապահող մյուս ոստիկանները վազում են իրենց աշխատակցին փրկելու գլուխը կորցրած խելագար կենդանուց, որը, շատ հեռու վաճառվելով նրանց, անհայտանում է անտառի մեջ...

Գլխավոր ճանապարհը նկարահանվում է պլաներից անբացված հատուկ խցիկներով: Չկա տուժող, չկա դատվող:

ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Նոյեմբերի 23-ին Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնի գրական խմբի պատանի ստեղծագործողները հանդես եկան հեղինակային ընթերցումներով: Սա առաջին հանդիպումն էր, որ կարող է նրանց համար ստեղծագործական մեկնարկ լինել դեպի խոսքարվեստի աշխարհ: Անշուշտ, մասնակիցներին միավորում են ստեղծագործողի մտախառնվածքը, կյանքը պատկերավոր մտածողությամբ ընկալելու, իրականությունից դուրս այլընտրանքային իրականություն ստեղծելու ձգտումը... Երիտասարդ ստեղծագործող Լաուրա Գարությունյանը այս-

պես է գնահատում գրական միջավայրում համարակրթեն ներկայանալու, ինքնադրսևորվելու իրենց փորձը:

«21-րդ դար համաշխարհային մարդկանց կյանքից դուրս են մղել գեղարվեստական գրքերը, հոգևոր արարումը և ներդաշնակ բարձրում ճախրելը: Այսօր գերարագ ժամանակներում, մենք փորձում ենք ընտրել հոգևոր հանգրվանային կանգառներ:

Մեր նպատակը ստեղծագործողից գրող դառնալն է, որը թերևս ոչ բոլորիս կհաջողվի... Մեր առաքելությունն է՝ ստեղծել այնպիսի «հայելի-

ներ», որոնց միջով կերևա մեր հոգին, գեղեցիկի ու վեհի մեր ընկալումները, փորձի բարոյության վերամակու ծածկել աշխարհի վառն ու չարը, մարտահրավեր նետել նրանց անկուսական «պարկեշտությանը»:

Ինչևէ, շաքարակա՛ն 168 ժամից գոնե 6-ը անցկացնելով գրական մթնոլորտում, մենք խնամրվում ենք Նորին մեծնություն Քանաատնոթյան առաջ: Ինչպես նկարիչն է ծաղկեցնում, այնպես էլ մենք ենք ծաղկեցնում մեր ապրումները, երբեմն նաև ապրում չապառժը, ընկղմվում բառերի մոգության հորձանուղը, բայց միշտ փորձելով նոր հանգրվանի հասցնել

մեր տեսլականը... Մենք պատվում ենք հեքիաթային երազներով, երբ կարդում ենք փոքրիկ Նարեհին, լքվում չափահասի խոհափիլիսոփայությամբ, երբ ունկնդրում ենք Նվերին, Ամժեյան և Սիրանուշը փորձում են արցունքի կաթիլներ նկարել մեր աչքերում: Մեկիցն ու Ամայյան մեզ ճանապարհից դուրս գալու միակ ելքն են առաջարկում, վերցնել ճանապարհներն ու հեռանալ: Ինչ մտնում է Աստղիկներին, նրանք փորձում են իրենց անվանը համահունչ ստեղծագործել՝ անընդհատ կապ պահելով տիեզերքի հետ, իսկ, այ՝ Անուշը, փորձում է իր համառոտ նախադասություններով մեզ կախարելով անզգամ շնչել չթողնել: Ընթերցվող փոքրիկ ստեղծագործությունները մեր առօրյաի ճնունդն են,

մեր տիկնիկանան հոգիներից սկիզբ առած երազները և այնքան կարևոր ապատությամբ ճախրող մեր մտքերը»:

Պատանի ստեղծագործողներին ողջունեցին ԶԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը, բանաստեղծուհիներ Բոզա Դովհան-Նրիսանը (որն, ի դեպ, գրական նորաստեղծ խմբի ղեկավարն է), Լուսինե Աղաջանյանը, Սոֆյա Մամունյանը, գրականագետ Կարինե Մարտիրոսյանը, Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնի տնօրեն, նկարչուհի Սուսաննա Մկրտչյանը: Նրանք գրական նորերով ուժերին մարտնչեցին ինքնարտահայտման համարձակություն, վսեմ փորձի ստեղծագործություն կան գյուտն ր, գյուտն ր...



Երակներով գրչիս երազներ են հոսում... Ես գրում եմ սարած ու չապրած զգացմունքներիս մասին: Գրում եմ անս երազում, ոչ թե քանաքե զրջով, այլ տեսլական սուր ու բեկուն միջերով: Գրում եմ երազներս, որոնք չեն ուզում կատարվեն, չէ՛ որ սիրում եմ նրանց հենց այդպես: Ես մյուսների պես երբևէ չեմ ասում, թե չեմ կարող սարծ րաանց գրելու թեկուզ մեկ օր...

ՍՐԲԱԶԱՆ ԳՈՂ

ԼԱՌԻՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*** Տիկնիկ եմ ծնվել՝ հավերժ ժպտացող, Սոռաջել ես դու արևին ջո ջոն՝ Փոքրիկ տիկնիկիդ քեզ անչափ սիրող, էլ առաջվա պես նրան չես գրկում Ու առաջվա պես նրան չես սիրում: Կիսատ թողեցիր գիշերները իհն, Երբ երգ էիր գրում ծնված ժպիտին, Խեղդեցիր երկնի միակ արևին, Որ լուսաբացս մենակ միշտ լինի: Այսքանից հետո ժպտում է նա քեզ, Աչքով է անում տիկնիկդ փոքրիկ, Արցունքի միջից գրկել է տեսնում, Բայց գիրկը առնում միայն երազում: Տիկնիկ եմ ծնվել՝ հավերժ ժպտացող, Հավերժ հանդուրժող, Հավիտյան ներող... Տիկնիկ ես դարձրել՝ ժամ առ ժամ մեռնող...

*** Մետաքս չեմ հագնում էլ առաջվա պես, Փոխել է կարտոզ Երկնիկ վերարկուս, Մրսում ու գողում եմ անսեր, առանց քեզ... Ստիճքներս բաց անձրև են տեսնում, Չեմ էլ ամաչում հեռու անցորդից, Խաշամի տեղակ անոթս եմ փռել...

Ների՛ր ինձ, ընկեր, համբույր չեմ ուզում, Այժմ մարդուն եմ հետքը շուրթերիցս, Անձրևի քամոտ կաթիլով թրջում... Ների՛ր ինձ, ընկեր, գրկել չեմ ուզում, Հողմին եմ ուզում փաթաթվել ուժգին, Ու չհիմարել, լոկ տրվել նրան... Ուզում եմ պանդել էլ ոչ թե տաքուկ, Այլ քաց ու քարոտ անկողնում մայթի, Ինձ պազուտ դարձրեք կարտոզ այսպես... Աշունն է եկել, գայթակղել է ինձ, Լքի՛ր ինձ, ընկեր, թող տրվեմ նրան, Ու թող աշունը փարվի իմ ուսին, Երբ դեռ տեսնում եմ ցերեկվա լուսնին...

*** Ճախրել եմ ուզում... Ա՛հ թե թեթին ինձ, քարի ամպիկ, Փափուկ ուղեկցի՛ր դեպի լուրթ երկինք, Լա էլ իմ հոգու նմանակն է մի, Ու կարևորը ազատ է, անձր: Տա՛ր դեպի երկինք, դարձրու Երազանք, Մնա՛լ քո գրկում՝ ազատության մեջ, Քեզ հետ և ազա՛լ անձրևի տեսքով, Ե՛վ ուրախանա՛լ արևի շողով: Դարձրու է ինձ հյուրը սպիտակ անկողնուդ, Ու թող որ ճախրեմ անսկիզբ ու անվերջ...

